# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

«Ծանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին հաստատելով յերկրի զգիր կենդանի»:

Հավատացյալ և հավատավոր զավակներ հայոց ազգի և բնակիչներ Օշականի ու ամբողջ Արագածոտն գավառի, որք այժմ համախմբյալ կաք այս նվիրականագույն տրբավայրում՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին վրա կանգնած եկեղեցվո մեջ:

Բառերը, որոնք արտասանեցի այժմ, խորիմաստ բառեր են, որոնք դարերու ճամփա են կտրած և այսօր մեր ականջներուն մեջ կհնչեն՝ վաղը և գալիք ժամանակներում հնչելու համար նաև մեր զավակներու, թոռներու, ծոռներու ականջներուն մեջ: Բառեր են այս բառերը, որոնք ոչ ժամանակ կճանչնան և ոչ ալ աշխարհագրություն ունին, հավիտենորեն ճշմարիտ են, ինչպես երեկ, նաև այսօր և հավիտյանս: Ի՞նչ են ուզում ասել այս բառերը, շարականագիր վարդապետին հանճարեն բխած իմաստության այս աղբյուրները: Նրանք՝ Սահակ և Մեսրոպ, և նրանց հետևող աշակերտները Աստուծո միտքը, իմաստությունը տնօրինաբար Աստուծո կողմե տրված զորությամբը ծաղկեցուցին, իմաստը Աստուծո մեր կյանքի մեջ ցանեցին, զարդարեցին մեր կյանքը ինչով՝ երկրի վրա երկնային ճշմարտությունը թարգմանելով կենդանի գիրով: Գիրը կենդանի է, գիրը կյանք ունի, գիրը գիր չէ թուղթի վրա, գիրով խորհրդանշված գաղափարը, հավատքը, ապրումը մարդոց կյանքի մեջ կենդանություն է, ուժ է և, հետևաբար, այս երկու բառերը նշանակում են անեղին իմաստը զարդարել մեր կյանքով և կենդանի գիրը հաստատել երկրի վրա: Այսպիսի մեծ առաքելության մը ռահվիրաները եղան Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, որոնց տոնը կկատարե այսօր Հայոց Եկեղեցին աշխարհի չորս ծագերին:

Դուք այսօր ինձի հետ միասին և մեր միաբանության անդամների հետ միասին, Մայր Աթոռ զավակներդ, երջանկագույն անձերն եք այսօր ամբողջ աշխարհում, զգացե՛ք այդ, ոչ ոք ձեզանից բացի այսօր գտնվում է այնպիսի տրամադրությանը մեջ, այնպիսի սերտության, հաղորդության մեջ այս մեծ սուրբերին, մեր ոսկեդարի ճարտարապետներին՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի:

Քիչ առաջ, ընկերակցությամբ մեր միաբանության բոլոր անդամներին, մենք ցածը գնացինք և խոնարհվեցինք ու համբուրեցինք Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմը: Այդ համբույրը հոգեկան զորության աղբյուր էր և այստեղ այժմ ուզում եմ մի քանի բառերով այդ զորության ներկայությունը զգացնել ձեր բոլորի մեջ:

Հայ գիրը, հայ գրականությունը ստեղծվեցին զԱստված թարգմանելու համար: Այդ ճշմարտությունը ոչ ոք կարող է իր մտքիցը դուրս հանել: Եվ երբ այդ գիրը գտնվեց՝ երեսունվեց տառերից բաղկացած մեր Այբ Բեն Գիմը, առաջին բառերը այստեղ գրված բառերն են. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս յանճարոյ»: Առաջին հայ տողերն են ասոնք, երբ չկար ոչ մի գրականություն, այսպես սկսվեց, Ամենաշնորհ Մատյանի բառերով սկսվեց մեր գրականությունը: Նվիրականություն կա այս գիրին մեջը, երբ Ս. Մեսրոպի տեսիլքին մեջ երկնատուր զորությամբ եկան մեր գրերը և ոչ թե ինքը նստավ և իր գրասեղանի վրա նրանց ստեղծեց: Աստվա՛ծ ցույց տվավ նրան և երկինք ու

երկիր իրար միացան հայոց գրի մեջ՝ Աստվածաշունչ Մատյանի Սուրբ Գրքի զորությամբ: Դարեր անցան, շատ դեպքեր եկան ու գացին, շատ տաճարներ, բերդեր ու պալատներ քանդվեցին, բայց էլի գիրը մնաց ոչ թե նվաճված, այլ՝ նվաճող: Աշխարհի բոլոր բանակները, որքան էլ զորավոր լինեն, մի օր կպարտվեն: Ամենահաղթ բանակը երեսունվեց զինվորներից բաղկացած բանակն է՝ հայոց այբուբենը: Ոչ ոք կրցավ այս բանակին հաղթել, բայց այս բանակը հաղթեց բոլոր մահվան այն վտանգներին, որոնք սպառնացին մեր ժողովրդին: Եվ այսօր, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել եմ խոնարհվելու այդ գիրին առաջ մի անգամ ևս, այդ գիրը ստեղծողին շիրմին համբույրով և հարգանքի ու պատկառանքի, հավատարմության խոստումով, որ մենք պիտի շարունակենք այդ բանակին զինվորները դառնալ, մեր մատներով մեր երեխաներու դպրոցական կրթությամբը, մի խոսքով պիտի դառնանք այն, ինչ որ եղան թարգմանչաց սերունդի անդամներ: Ես այժմ ուզում եմ օշականցիներիդ, բոլորիդ գիտակցությանը մեջ բանալ մի լուսավոր էջ, որ մոռացվել է, ես էլ չէի իմանում մինչև երեկ գիշեր: Երևակայեցեք դուք, օշականցի զավակներ, երևակայեցեք 84 տարիներ առաջ երջանկահիշատակ կաթողիկոս Գևորգ Ե, 23 կառքերով Էջմիածնից եկավ այստեղ հայ գրի գյուտի 1500-ամյակի առիթով՝ եպիսկոպոսներով, վարդապետներով, մտավորականներով: Թիֆլիսից եկան ժողովրդի կողմից ընտրված ինն հոգիներ, մտավորականներ և 3000 ժողովրդի առաջ կանգնեց Կաթողիկոսը Գևորգ Ե 1912 թվականին և այս բառերն արտասանեց, որոնք իրենց ութսունչորս տարիների խորությունից արձագանքում են այսօր իմ տկար շրթներովը ձեր ականջներին:

Երևակայեք, երևակայեք, ա՜խ...

Այս խորանին վրա պատարագիչն էր Խորեն Մուրադբեկյան նահատակ Կաթողիկոսը:

-Օշականցի՛ք,— ասաց այն ատեն Գևորգ Ե Կաթողիկոսը,— թեև ձեր գյուղը մի փոքրիկ գյուղ է, սակայն ունի մի այնպիսի հիշատակարան, որ շատ քաղաքների համար փափագելի պիտի լիներ, շատ քաղաքներ նախանձում են ձեզ, որ այս դամբարանը իրենց մեջ չէ, ինչպես յոթը քաղաքներ վիճում էին, թե Հոմերոսը իրենց մեջն է ծնված: Օշականցի՛ք, ձեր վրա պարտք կդնենք, որ ժողովեք Սուրբ Մեսրոպի լուման և մի գեղեցիկ հուշարձան-դպրոց կանգնեցնեք նրա գերեզմանից ոչ շատ հեռու, այս խարխուլ շինության փոխարեն: Թեև մենք հրավեր ենք կարդացել այս մեծ հոբելյանի՝ 1500-ամյակի առիթով հիմնել դպրոցական ֆոնդ, բայց եթե ամեն մի հասարակություն, ամեն մի համայնք ինքը չմտածե ապահովել յուր դպրոցը, հապա դպրոցական ֆոնդը շատ քիչ բան կարող է անել: Օշականցի՛ք, հայե՛ր, զարթնեցե՛ք ձեր թմրությունից և ապահովեցե՛ք ձեր դպրոցական գործը, որով ամենից լավ հարգած կլինեք Սուրբ Մեսրոպի մեզ թողած հիշատակը: Վերստին հրավիրում ենք ձեզ, օշականցիք, և ապահովեցե՛ք ձեր ուշադրությունը այս դպրոցի վրա, ապահովեցե՛ք ձեր դպրոցը, շինեցե՛ք մի օրինավոր շենք, որպեսզի եկող տարի այս ժամանակ, երբ կրկին այցելության կգամ Սուրբ Մեսրոպի գերեզմանին՝ մեր սիրտն էլ ուրախանա՝ տեսնելով հարգված մեր մեծ Վարդապետի մեծ հիշատակը, մեծ գյուտը, մեծ հոբելյանը:

Այս բակում, հազարավոր ժողովրդի առաջ Սմբատ Այվազյան արքեպիսկոպոս, Գարեգին Հովսեփյան վարդապետ, Կարապետ վարդապետ Տեր-

Մկրտչյան, Երվանդ Շահազիզ, Ստեփան Բալասանյան, Ալեքսանդր Քալանթար, Գրիգոր ավագ քահանա Մանդակունի և ուրիշ մտավորականներ ճառեր խոսեցին և փառաբանեցին մեր գրի գյուտի հանճարեղ հեղինակը՝ Մեսրոպ Մաշտոց: Պատմական այդ ամբողջ հիշատակը՝ այսօր հին Մյուսոնին պես թող լցվի ձեր կյանքի մեջ: Այդ խարխուլ շենքը շինվեց, բայց շենքը պիտի կանգնի, որպես ոչ դամբարան, այլ կենդանարար վերածնության մղիչ ուժ ձեր և ձեր գալիք սերունդների համար: Օշական գյուղը չպիտի լինի գերեզմանի գյուղ, պիտի լինի կյանքի գյուղ, և այդ կյանքը պիտի արտահայտեք այդ նվիրականագույն, սրբագույն մեր ուխտավայրին տալով նոր շունչ՝ վերարծարծված շունչը մեր քրիստոնեական հավատքին, Սուրբ Ավետարանի, որու սպասավորը եղավ Ս. Մեսրոպ Մաշտոց:

Այսօր մենք տոնում ենք երկու մեծ սուրբերի հիշատակը՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպ Մաշտոցի: Նրանց համար առվել է՝ անզուգական զույգը, նրանց նմանը չի եղել մեր պատմության մեջ: Ա՜խ, որքան, որքան պիտի փափագեի, ինչպես 1912-ին իմ երջանկահիշատակ նախորդներից Գևորգ Ե կաթողիկոսն էլ ասել էր, որ Ս. Սահակի մասունքներն էլ գտնվեին և այստեղ թաղվեին, նրանք, որ երկնքի մեջ միասին են, երկրի վրա էլ միասին լինեին նրանց դամբարանները: Ուրիշներն են ասել անզուգական զույգը, ես պիտի ավելացնեմ. ոչ միայն զույգը, այլև երրորդությունը՝ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ և Վռամշապուհ արքա, ինչպես Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ և Աշխեն երրորդություն են հայության կյանքի մեջ, որոնք հավաքաբար ստեղծեցին այն, ինչ որ թողեցին մեզ իբրև անմահ կտակ և կյանք տվող, անմահացուցիչ ուժ տվող զորություն: Ա՜խ, ինչ կլիներ մի օր գտնվեր նաև Վռամշապուհ արքայի գերեզմանը և այստեղ այս երրորդության համար կառուցվեր մի այնպիսի հուշալիր, որ երեքը միասին խոսեին և վերակենդանացնեին մեր մեջ այն հավատարմությունը, որ իրենք թողեցին իրենց կյանքով:

Այսօր, որքան երջանիկ ենք բոլորս, ներության մեջ իսկ երջանիկ ենք, որ ունենք անկախ պետություն, ունենք վերանկախացյալ Հայաստան և հայրենիք: Եվ ահավասիկ, մեր աշխարհը վերստին իր իսկատիպը, իր հարազատ հայու վայել հայու հոգու արտահայտությունն է ունենում, մերն է այլևս այս հողը, մենք ենք աևոր և՛ ծառան, և՛ տերը, և այսօր Արագածոտն գավառը հոչակվել է մեր պետության կողմից որպես տասնմեկ մարզերից մեկը Հայաստանի Հանրապետության վարչական դրությանը և ես ողջունում եմ այսօր մեր մեջ մեր սիրելի մարզպետին, որ եկել է պետության մասնակցությունը բերելու համար մեր այս ազգային-եկեղեցական մեծ տոնին:

Բոլորդ էլ իմացաք մամուլից հատուկ այն կարգադրությանը մասին, որ մենք կատարեցինք սրանից շուրջ մեկ ամիս առաջ և Հայաստանի Հանրապետության տարածքում մեր եկեղեցական-կրոնական գործը զարգացնելու, զորացնելու, ժողովրդի կյանքին մեջ տարածելու մտահոգությամբ և առաջադրությամբ առանձին թեմ հոչակեցինք Արագածոտն գավառը և առաջնորդ նշանակեցինք երիտասարդ մի հոգևորական, որ զավակն է այս շրջանին և վստահաբար դուք ծանոթ եք նրան, իբրև Օշականի նախկին հովիվ և այժմ առաջնորդ Արագածոտն գավառի: Հասակով ինձնից ավելի երիտասարդ և աշխույժ, հավատքով լեցուն, ծառայության կամքով զսպանակված: Ցանկանում եմ, որ Արագածոտն գավառի ամբողջ մեր ժողովուրդը ապրի հոգևոր վերարթնության մի նոր շրջան, և դու լինես լուսարարը այդ հոգևոր լույսին, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից

տարածվում է մեր ողջ ժողովրդին՝ և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս, արտասահմանում ապրող մեր ամբողջ ժողովրդի վրա:

Սիրելի՛ք, մեծ գործերը կարող են լինել տեսիլքը անհատների, բայց մեծ գործերը գործ չեն լինի առանց հավաքական աշխատանքի: Մեսրոպ Մաշտոց գիրը գտավ, բայց եթե Սահակ Կաթողիկոսը չկազմակերպեր ամբողջ այն աշխատանքը, որ թարգմանչական աշխատանքն էր, ի՞նչ արժեք պիտի ունենար գիրը: Սահակ Կաթողիկոսն ալ եթե չունենար իրեն զորավիգ հայոց արքան, հայոց պետությունը, չէր կարող մեծ գործ կատարել: Եվ եթե երբեք Սահակ, Մեսրոպ, Վռամշապուհ չունենային թարգմանիչ վարդապետները՝ տասնյակներով այն երիտասարդ հոգևորականները՝ առանձին ինչ կարող էին անել: Հետևաբար, մեծ իրագործումները հավաքական, միասնական աշխատանքի արդյունք կարող են միայն լինել: Դրա համար ես այսօր կոչ եմ անում մեր ողջ միաբանությանը, բոլոր հոգևորականներին, որ այս տոնը դառնա կերպարանափոխիչ զորության ազդեցիկ մի տոն մեր կյանքի համար:

Մենք՝ հոգևորականներս, չենք եղել մենք մեզի համար, եթե մենք մեզի համար էինք ապրելու, ինչո՞ւ սքեմն առել ենք: Մեր իսկ սահմանումն այն է, որ մենք ապրենք Աստծու համար՝ ժողովուրդի համար գործելով, եթե այս չենք, հոգևորական չենք, ինչպես Սահակ, Մեսրոպ, Եզնիկ, Կորյուն, Մովսես Խորենացի, Փարպեցի և տակավին շարքը այն բոլոր թարգմանիչներին, ովքեր դադրեցին անհատ լինելուց, դարձան ծառայություն, տարածուն իրենց ամբողջ ժողովրդին:

Հետևաբար, գեղեցիկ է այսօր, որովհետև հոգևոր ճեմարանի տեսուչն է պատարագում, հոգևոր ճեմարանի սաներն են երգում և այս երեկո Էջմիածնի Վեհարանում պիտի կատարվի տարեվերջյան հանդիսությունը, փակման հանդիսությունը 1995–96 տարեշրջանի: Այս առիթով ես կոչ եմ անում մեր պատանի և երիտասարդ սերնդին, որ մղվեն դեպի հոգևոր ճեմարան, կամ հոգևոր դպրանոցներ, որ վերակենդանացնենք, նորացնենք այն շրջանը, որ հինգերորդ դարը եղավ մեր պատմության մեջ:

Հետևաբար, երբ եկել ենք այսօր Ս. Սահակին և Ս. Մեսրոպին խունկ ծխելու, այդ արտաքին, նյութեղեն խունկին պետք չունենանք, այդ խունկը խորհրդանիշ է մեր ինքնամատուցումին, մեր ինքնընծայումին, մեր ծառայության: Մե՛նք ենք խունկը, ոչ թե նյութն է խունկը, մեր ծառայությունն է, մեր գործն է խունկը, որ կընդունի Աստված: Եթե կյանք չկա մեր խնկարկության մեջ՝ խնկարկությունը անիմաստ է: Աղո՛թք պետք է լինի, կապվածություն առ Աստված և՛ առ ազգն, և՛ առ մշակույթն: Ա՛յս է ճշմարիտ խնկարկությունը և Ո՛վ Տեր, ընդունե մեզ, մեր անարժանավորության մեջ իսկ ընդունե մեզ, որ դառնանք մեր անձերով, մեր կյանքով, յուրաքանչյուրը իր աստիճանի և իր պաշտոնի մեջ մի պատառ խունկ աստվածային կրակին Քո ժողովրդի կյանքի մեջ, որպեսզի խնկավորվենք և դառնանք մեր ժողովրդի հոգեկան սնունդի համար նո՛ր մատակարարներ մեր նո՛ր Հայաստանին, մեր վերածնվող Հայաստանին և մեր վերանորոգվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և ամբողջ Հայ Եկեղեցու և ազգի փառքին համար, հավիտյանս հավիտենից, ամեն: